

Սեվրի դաշնագիրը և ԱՄՆ-ի քաղաքականությունը  
Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1919-1920թթ.

1919-1920թթ. Փարիզի վեհադոժովը ցույց տվեց, որ ԱՄՆ-ը չէր ձգտում ստանձնելու արևմտահայ այն նահանգների խնամակալությունը, որոնք ռուսական բանակը գրավել էր 1914-1917թթ.: Նա սահմանափակվում էր լայնածավալ մարդասիրական օգնությամբ և մանդատի խոստումներով, որոնք մշակվել էին Եվրոպայի հետ իր մրցակությունը մեղմելու համար: Վ.Վիլսոնի խոսքի խաղաղասեր երանգը տարածվում էր նաև հեղափոխական Ռուսաստանի վրա: Ուստի 1919թ. հունվարի 18-ին Պողոս Նուբարի հետ զրույցելիս, Վիլսոնը դեմ է արտահայտվել հայերի պաշտոնական ներկայությանը կոնֆերանսում<sup>1</sup>: Հունվարի 30-ին դիվանագետները ընդունեցին առաջին կարևոր բանաձևը Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրությունից անջատելու ու մանդատար տերության աջակցությունը տրամադրելու մասին: Վիլսոնն անմիջապես նշեց «ամերիկյան բանակով Կ.Պոլիսը կամ Միջագետքը ռազմագրավելու» իր ցանկության մասին<sup>2</sup>: Ամերիկացիները ձգտում էին նաև Անդրկովկաս: Ա.Ահարոնյանի մտահոգությամբ՝ առանց այդ երկրամասի նրանք գուցե և «շահագրգռված չեն լինի միայն Հայաստանով»<sup>3</sup>: 1919թ. մարտի 20-ին Սպիտակ տան ղեկավարը խոսեց Սիրիայի, Կիլիկիայի և ողջ Օսմանյան կայսրության նկատմամբ մանդատը տարածելու մասին, իսկ ապրիլի 17-ին տված ունկնդրության ժամանակ տեղեկացրեց Ահարոնյանին, Պողոս Նուբարին ու Հ.Տեր-Հակոբյանին. «Ես աշխատում եմ ձեր ուզած չափով ձեր տերիտորիան // -284 ապահովել հայ ժողովուրդին: ...Ձեր խնդիրը շատ լավ է ընթանում»<sup>4</sup>:

Մայիսի 5-ին, 6-ին, 13-ին և 14-ին վեհաժողովը Վիլսոնին առաջարկում է Հայաստան ու Բոսֆորի ափեր գործ ուղարկելու հնարավորություն, ինչին ի պատասխան վերջինն ասում է, որ ինքը չգիտեր, թե արդյո՞ք ԱՄՆ-ը «ի վիճակի կլինի ստանձնելու մանդատը»<sup>5</sup>: Նախագահը ձգտում էր ստանալ ողջ Օսմանյան կայսրության խնամակալությունը: «Ձեմ կարծում, - առարկեց Դ.Լևոյդ Ջորջը,- որ դա հնարավոր է իրականացնել»<sup>6</sup>: Ուստի մայիսի 14-ին Սպիտակ տան ղեկավարը համաձայնեց խնամակալության տակ վերցնել Հայաստանը և Կ.Պոլիսը՝ սեղանին դնելով իր իսկ քարտեզը՝ հայկական սահմաններով հանդերձ: Ամսի 21-ին Վիլսոնին հատկացնում են մի վիթխարի գոտի՝ Կիլիկիայով, նեղուցներով և Արևմտյան Հայաստանով: Կիլիկիան կարող էր փոխարինվել Արևելյան Հայաստանով, ամբողջ Կովկասով և Արդբեջանով: Նման գայթակղիչ տարբերակների պայմաններում ԱՄՆ-ի պատվիրակությունն ընդմիջեց քննար-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.1214, ք.14:

<sup>2</sup> United States National Archives, Washington D.C., Record Group 256 Records of the American Commission to Negotiate Peace, class 180.03101/document 24 (այսուհետև՝ US NA, RG).

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ.200, ց.2, գ.47, ք.3:

<sup>4</sup> ՀԱԱ Նույն տեղում, գ.51, ք.6, նաև գ.49, ք.1, գ.1, գ.35, ք.118-119, ֆ.275, ց.5, գ.97, ք.72:

<sup>5</sup> US NA, RG 256, 180.03401/144.

<sup>6</sup> Ibid., doc.10½.

կումները:

1919թ. հունիսի 26-ին ԱՄՆ-ի պատվիրակության ղեկավարը հրա-  
ժարվում է Բոսֆորից: Ապա հուլիս 1-ին Յ.Յուվերը զեկուցեց իր աշխա-  
տակիցներին մանդատի՝ միայն Միջագետքի հետ ընդունելի լինելու  
մասին: Նման մոտեցմամբ նեղուցների փոխարեն կարևորվում էր Կիլի-  
կիայի դերը: Պատվիրակները վճռում են նաև, որ իրենց երկիրը չի միջա-  
մտի՝ «մինչև լիակատար ու շատ մանրագին չհստակեցվեն աշխարհա-  
գրական այն տարածքների սահմանները, որոնք տրվելու էին»<sup>7</sup> Հայաս-  
տանին: Այդ նույն ժամանակ ՅՅ վարչապետ Ա.Խատիսյանը մտորում էր,  
թե ԱՄՆ-ը չի կարող պարենային համաձայնագիր կնքել «այն պետության  
հետ, ում անկախությունը դեռ մնում է կասկածի տակ»<sup>8</sup>: 1919թ. հուլիսի  
11-ի նա իսկույն դիմում է Երևանում բացված Ամերիկյան նպաստամա-  
տույց վարչության տնօրեն Ս.Չ.Ֆորբսից՝ 30 հազար զինվորական համա-  
զգեստ գնելու հար-//-285 ցով<sup>9</sup>:

Օգոստոսի 12-ին անգլիացիները տեղեկանում են, որ Կովկասում  
«ամերիկյան զորքի մշտական տեղակայումը... անհնարին է», իսկ Կոն-  
գրեսում «վտանգավոր է հույս դնել արագ գործողությունների վրա»:  
Պետքարտուղար Ռ.Լանսինգին զեկուցեցին, որ Բրիտանիան կարող է  
շարունակել Հայաստանի պաշտպանությունը, «եթե ԱՄՆ-ը հատուցի դրա  
գինը»<sup>10</sup>: Ամսի 19-ին Լոնդոնը հետաքրքրվեց ամերիկյան բանակի տեղա-  
կայման ստույգ ժամկետով: Անգլիան այս կերպ ցանկանում էր խույս տալ  
«նենգության համար մեղադրանքից, եթե մանդատը, ի վերջո, մերժելու  
են»<sup>11</sup>: Սակայն օվկիանոսի մյուս ափում «նման նպատակի համար բացա-  
կայում էին կանխիկ միջոցները», իսկ Կոնգրեսին դիմելը «արդեն իսկ  
մոլեգին կրակի վրա յուղ ածել էր միայն»<sup>12</sup>:

Աշնանը՝ նոյեմբերի 1-ին, Հայաստան այցելած զինվորական առաքե-  
լության պետ գեներալ Ջ.Յարբորդը Երևանում Խատիսյանին հանձնեց  
Անգորայի դահլիճի ուղիղ բանակցություններ սկսելու հրավերը<sup>13</sup>: Այսպես  
Յարբորդը դառնում էր միակ իրավարարը կամ միջնորդը Թուրքիայի և  
ՅՅ-ի միջև: Ինչ վերաբերում է մանդատը ստանձնելուն, ապա դրա համար  
պահանջվում էր 59-ից 200 հազ. արտասահմանից բերած զինվորներ և  
հինգ տարվա համար 756 մլն 14 հազ. դոլ.: ԱՄՆ-ում Վիլսոնի ձգտումնե-  
րին հակազդումն ամփոփվեց 1919թ. նոյեմբերի 19-ին, երբ Սենատը մեր-  
ժեց Վերսալի պայմանագիրը՝ նրա մանդատային ծրագրով հանդերձ:  
Չնայած դրան՝ երկու ազդեցիկ կուսակցությունները համաձայնել էին Հա-  
յաստանի անկախության ամերիկյան կոմիտեում (ՀԱԱԿ), որ Թուրքիայի

<sup>7</sup> US NA, RG 256, 180.03401/101.

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.35, ք.89 և ֆ.1021, ց.2, գ.962, ք.118:

<sup>9</sup> Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.304, ք.13:

<sup>10</sup> Papers Relating, 1919, in 2 vols., vol.II, Wash., GPO, 1934, p.829-830.

<sup>11</sup> Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., сост. и пер. с англ. Г.Г.Махмуриян, 2-е доп. изд., Ер., Ин-т истории НАН Армении, 2012, с.192-193.

<sup>12</sup> Papers Relating, 1919, in 2 vols., vol.II, p.834.

<sup>13</sup> Ա.Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ տպագ., Պեյրուք, Համազգային, 1968, էջ 192:

հետ հաշտության պայմանագրում պետք է ամրագրվի հայերի անկա--  
286 խությունը՝ կազմակերպության համար ընդունելի սահմաններով<sup>14</sup>:  
Թեև սենատորները 1919թ. հոկտեմբերի 10-ին կայացած միջազգային  
հարաբերությունների կոմիտեի ենթախմբի լսումների ժամանակ չէին  
թաքցնում, որ ամերիկյան զորքերի թեկուզ ժամանակավոր տեղադրումը  
casus belli է և հանգեցնելու է թուրքերի լայնածավալ հարձակմանը թշնա-  
մուն հարմար ցանկացած պահի<sup>15</sup>: Ընդ որում, Սենատին հղած ուղերձում  
Հայ առաքելական եկեղեցու Կ.Պոլսի պատրիարք Ջավեն Տեր-Եղիայանը,  
Հայ կաթոլիկ եկեղեցու աթոռապահ Ավգուստին Սաեդյանը ու ազգային  
բողոքական համայնքի առաջնորդ Ջենոբ Բեզճյանը նշվում էին Թուր-  
քիայի եռանդուն բանակաշինության մասին՝ ՀՀ սահմանների վրա հար-  
ձակվելու, Հանրապետությունը ներսից քայքայելու մասին: Հակառա-  
կորդը առիթի չէր սպասում՝ նա ինքնուրույն քաղաքականություն էր վա-  
րում և կանխում հնարավոր զարգացումները<sup>16</sup>:

1919-1920թթ. ձմռանը ԱՄՆ-ում մանդատի ընդունման գաղափարից  
անցնում են Հայաստանի անկախության անմիջական աջակցությանը,  
իսկ գործական միջոցառումները կենտրոնացան նպաստամատույց հար-  
ցերի վրա: 1920թ. հունվարի 7-ին Լանսինգին հղած նամակում Գ.Փաստ-  
րմաճյանը հայցում էր ռազմական մատակարարումներ, քանի որ թուր-  
քերը չեն հարձակվում հայերի զինված լինելու դեպքում միայն: «Աններե-  
լի ու ծայրաստիճան դաժան է Հայաստանի բարեկամների կողմից,- նշել է  
Արմեն Գարոն,- մեզ զրկել ինքնապաշտպանության միջոցներից, եթե դուք  
ինքներդ ի վիճակի չեք մեզ պաշտպանել»<sup>17</sup>:

Մինչև 1920թ. ապրիլը ԱՄՆ-ն զերց էր մնում Հայկական հարցի  
քննարկումներից: Փետրվարի 21-ին Պոլոս Նուբարը, Ահարոնյանն ու Գ.  
Ղորղանյանը Լոնդոնի կոնֆերանսից տեղեկացան, որ Եվրոպան անկո-  
րող է զորք տրամադրել, սակայն: Ահարոնյանը հայտա--/287 րարեց, թե  
հայերն իրենք են գրավելու արևմտյան նահանգները: Իսկ 1920թ. մարտի  
19-ին ԱՄՆ-ի Սենատը հրաժարվեց օսմանյան մանդատներից: Միաժամա-  
նակ Ամերիկայի Հայ ազգային միության նախագահ Մ.Սվազյանը դիմեց  
պետքարտուղար Բ.Կոլբրիին՝ Ջ.Քերզոնի՝ Լորդերի պալատում արտասա-  
նած ճառի կապակցությամբ, թե ԱՄՆ-ն առաքելու է զենք, սակայն բա-  
նակը «հայերը պետք է... իրենք ապահովեն»: Որևէ փաստաթուղթը խա-  
ղաղություն չի բերի Ասիային,- պնդում էր Քերզոնը: Եվ ինքը չէր էլ  
երաշխավորում, «թե վեց ամիս հետո ընթացիկ պահի համեմատ դրուս-  
յունը չի վատթարանա»: Այնինչ, Վաշինգտոնում «հաստատ հրաժարվել  
են ստանձնել մանդատը»<sup>18</sup>:

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ.1021, ց.2, գ.962, ք.123:

<sup>15</sup> Maintenance of Peace in Armenia. Hearings before a Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, 66<sup>th</sup> Congress, 1<sup>st</sup> Session on S.J.R. 106 A Joint Resolution for the Maintenance of Peace in Armenia, Wash., GPO, 1919, p.28, 70, 100 (այսուհետև՝ Maintenance of Peace).

<sup>16</sup> Ibid., p.123.

<sup>17</sup> ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.431, ք.42 և 43:

<sup>18</sup> House of Lords, 11.03.1920 - "The Times," 12.03.1920, p.10, պահվում է՝ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.427, ք.104 դարձ.:

Ապրիլի 22-ին և 23-ին Պողոս Նուբարն ու Ա.Ահարոնյանը Սան Ռեմոյում հաստատեցին, թե Հայաստանի Հանրապետությունը կարող է իր ուժերով տիրել արևմտյան նահանգներին: Ամսի 24-ին Ահարոնյանը Պետդեպարտամենտին առաջարկեց ևս 150 կմ առաջ տանել սահմանը՝ Երզնկան ընդգրկելու համար: Թեև «առանց Դաշնակիցների շոշափելի զորքերի» քեմալականներին դուրս չէիր մղի, չնայած որ նրանց բանակը բազմաթիվ չէր, «վատ [էր] զինված ու թույլ հանդերձված»: Ուստի «հայերը միանգամայն ընդունակ էին գրավել Էրզրումը, եթե Դաշնակիցները տրամադրեն բավականա զենք, ռազմամթերք և... բարոյական աջակցություն»<sup>19</sup>: Մեկ օր ավելի ուշ Սան Ռեմոյի կոնֆերանսի առաջնորդները ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին առաջարկեցին կազմել կամավորական զորաբանակ կամ ընդունել սահմանային իրավարարի դերը: Մայիսի 17-ին նա համաձայնեց, իսկ ամսի 24-ին Կոնգրեսին «Հայաստանի հանդեպ մանդատը» խորագրով ուղերձ հղեց, որպեսզի նրան թույլատրվի խնամակալությունը<sup>20</sup>: 1920թ. մայիսի 25-ին Ահարոնյանը նշեց. «Վիլսոնը լավ գիտե՞նալով, որ իր առաջարկը անպատճառ պիտի մերժվի, ...դիմել է, //-288 որպեսզի իր վրայից պատասխանատվությունը վերանա»<sup>21</sup>: Ահարոնյանը նաև ցավում էր, որ իրավարարը վճիռը կայացնելու է պայմանագրի կնքելուց կամ նրա վավերացումից հետո միայն: Սա էապես ուշացնում և ծանրացնում էր գործը: Եվ իրոք, 1920թ. հունիսի 1-ին, երբ Ծերակույտը մերժեց հայկական մանդատը, նախագահին մնաց լոկ իրավարարությունը՝ չորս վիլայեթների սահմաններում: Բոլորը գիտեին, որ սահմանագծերն արդեն համաձայնեցվել էին Լոնդոնում, Վիլսոնին մնում էր թվարկել ռազմաքաղաքական միջոցառումներն ու կարելի էր անցնել նրանց իրականացմանը: Սակայն որևէ նման բան տեղի չունեցավ:

Իրավարար աշխատանքի համատեքստում 1920թ. հունիսի 14-ին հայկական կողմը նախագահին ուղղեց հետևյալ հուշագրերը. «Հայաստանի բնակչություն», «Վերերկրյա հաղորդակցության տեղագրական հատկությունները», «Հայտագիր՝ դեպի ծով ելքի մասին», և «Հայտագիր Հայաստանի սահմանների մասին»: Դրանք լրացրել էին լոնդոնյան՝ փետրվարի 26-ի «Հայկական ներգաղթի մասին» տեղեկանքը և փետրվարի 21-ին, 23-ին ու մարտի 2-ին կազմած «Հայաստանի սահմանների մասին» երեք գրությունները<sup>22</sup>: Գեներալ Հ.Բագրատունին մշտապես համագործակցում էր նախագահական Սահմանային կոմիտեի անդամներ Վ. Վեստերմանի և Հարրիսոն Գ.Դուայթի հետ, և նրանք միանգամայն համամիտ էին առաջարկված տեսակետի հետ<sup>23</sup>:

1920թ. օգոստոսին 6-ին բրիտանացիները խնդրում են պետքարտուղար Բ.Կոլբիին անհապաղ կայացնել այն վճիռը, որից «թեկուզ մասամբ

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.556, ք.314:

<sup>20</sup> Congressional Record, 66<sup>th</sup> Congress, 2<sup>nd</sup> Session, House of Representative Document № 791 "Mandate for Armenia," Wash., GPO, 1920, vol.LIX, pt.7, p.7533-7544.

<sup>21</sup> Ահարոնյանի նամակը ՀՀ վարչապետ Հ.Օհանջանյանին. ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, ք.144:

<sup>22</sup> Նույն տեղում, գ.557, ք.393:

<sup>23</sup> Նույն տեղում, ք.129 դարձ.-130:

կախված էր»<sup>24</sup> Սևրի պայմանագրի իրագործումը: Օգոստոսի 13-ին նրանց պատասխանեցին, որ «պատմական ու քարտեզագրական զանազան փաստաթղթերի զննումն ու ստուգումը... բավականաչափ ժամանակ էր պահանջում»<sup>25</sup>: Այնինչ հայկա-//289 կան բանակը ծայրաստիճան հյուծվել էր, քանի որ ՀՀ-ն «իր գոյության համար կռիվ էր տանում» իր իսկ սահմանների ներսում<sup>26</sup>:

Միայն սեպտեմբերի 28-ին՝ թուրք-հայկական պատերազմի սկսվելուց հետո, Պետդեպարտամենտը ստացավ «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի իրավարարության գծով կոմիտեի Ամբողջական հաշվետվությունը»: Այն մշակվել էր 1920թ. օգոստոսի 10-ից նոյեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում, ինչից հետո փաստաթղթերը փոխանցվեցին Վիլսոնին: Նոյեմբերի 22-ին նախագահը ստորագրեց «Ամբողջական հաշվետվությունը»: Նրա հեղինակներն առավելագույնս հաշվի էին առել ազգագրական տվյալները՝ միաժամանակ ղեկավարվելով տնտեսական ու ռազմական կամ ռազմավարական գործոններով: Նրանք նոր պետությանը տրամադրում էին Արևմտյան Եվրոպա տանող Տրապիզոնը, որտեղ պետք է ձգվեին Երզումից, Բիթլիսից ու Վանից կառուցվելիք ապագա երկաթուղիները<sup>27</sup>: Նոր սահմանամերձ գոտին ապառազմականացնելու խնդիրը ռազմական նախարարությունից մեկնաբանեցին գեներալ Հարբորդը, մայոր Ա.Յ.Մեյսոնը ու Լ.Մարտինը: Հարբորդը նկարագրեց պայթյունավտանգ իրադրությունն ու թուրքերի թշնամությունը ձևավորվող անկախ պետության հանդեպ: Նշվում էր, որ նրանց առանց հարկադրանքի հնարավոր չի լինի զինաթափել, թեև գեներալը մտավախություն ուներ վրիժառության ծարավ քրիստոնյաներին զինելու հարցում: Արտերկրյա գործերի տեղակայումը անկասկած ստիպելու էր նրանց գործել: Ուստի պետք էր կազմել միջդաշնակցային հանձնաժողովին ենթակա ուստիկանական գորաբանակ: Նրա կարծիքով՝ երկու դավանանքի հետևորդ 50 հազ. ծառայողները հրետանին կկիրառեին միայն լուրջ հուզմանների դեպքերում:

Թուրքական կողմի ապառազմականացված շերտը պետք է ունենար 80 կմ խորություն և կարող էր ծավալվել Դիարբեքի և //290 Խարբերդի վիլայեթներում<sup>28</sup>: Այդ 80-ից 40 կմ խորությունը բավարար էր ազատ առևտրի համատեղ գոտիների և տնտեսական արտոնյալ համագործակցության համար: Մայոր Մեյսոնի կարծիքով՝ Հայաստանը պաշտպանում էր վաղուց հականարտող, ազգային մեծ շահերի թևերը: Սա նրան դարձ-

<sup>24</sup> Papers Relating, 1920, in 3 vols., vol.III, Wash., GPO, 1936, p.787; US NA, RG 59, 760J.6715/40.

<sup>25</sup> Ibid.

<sup>26</sup> Ibid., 860J.48/43/f.2, T1192 Records of the Department of State Relating to Internal Affairs of Armenia, 1910-1929/Roll 7, Microfilm publications, Wash., National Archives and Records Service, General Services Administration, 1975, պահվում է ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու հ.36 (այսուհետև՝ մհ):

<sup>27</sup> Ibid., 760J.6715/65/f.83, 85, 88, T1193 Records of the Department of State Relating to Political Relations Between Armenia and Other States, 1910-1929/Roll 2/մհ 35: Տե՛ս նաև P.Обан-нучян, указ.соч., с.710-719:

<sup>28</sup> US NA, RG 59, 760J.6715/65/f.91-93.

նում էր խանդի, մրցակցության առարկա ու ենթարկում հնարավոր բազում հարձակումների<sup>29</sup>: Փորձագետը առաջարկում էր նրանց զսպելու հետևյալ միջոցները. 1) սահմանամերձ շրջանների տնտեսական թերզարգացումը՝ փոխադրամիջոցների տկար ցանցով հանդերձ, 2) զինվորներ ու զինանոցներ կուտակելու, ռազմականացված ավաններ կառուցելու արգելքը: Այդ ամենը մշտական հսկվելու էր որևէ չեզոք Տերության կողմից<sup>30</sup>: Բացի դրանից, ոստիկանության սպաներին հավաքագրելու էին միայն Դաշնակից ու չեզոք երկրներում կամ ԱՄՆ-ում, որոնք պետք է գործեին ու հաշվետու լինեին սահմանի միայն մեկ կողմում<sup>31</sup>: Հեղինակներն ընդունում էին վստահության երաշխիքների տարածումը երկու շահագրգիռ կողմերի վրա, բայց արգելքը դրվում էր միայն հարձակվողի և ցեղասպանության սադրողի վրա: «Ամբողջական հաշվետվության» մեջ նաև նշվում էր, թե ազգայնական շարժումը «մինչև վերջ հասցնելու դեպքում, ծայրաստիճան վտանգավոր կլինի հայկական պետության համար, եթե բոլշևիկյան առաջնորդները... վճռաբար իրականացնեն իրենց ծրագիրը»<sup>32</sup>:

Հետո սահմանային կոմիտեի անդամները տեղեկացրին փոքր, բայց լավ վարժեցրած զորքերի մասին, որոնք «պատրաստ են առաջ շարժվել ռուսաստանյան Հայաստանից: ...Նրանց նորերս մատակարարեցին զենքն ու ռազմամթերք, իսկ քաղաքական ընդհանուր իրավիճակը նպաստում էր հաջողությանը: Նրանք վստահ էին ազգայնականների տկար ուժերի դեմ պատերազմելու և չորս վիլա-/-291 յեթներում հսկողություն սահմանելու իրենց ունակության մեջ»: Միակ անկանխատեսելի խնդիր էր մնում, թե «ինչ են անելու բոլշևիկ առաջնորդները, [քեմալականների] դիմադրությանն աջակցելու համար: Մեծ Տերություններից մեկի մանդատային հսկողության բացակայության պայմաններում հայկական անկախության հետագա պահպանումը կասկածելի է»: Իսկ վաղեմի հակասությունների նորից բռնկվելու պարագայում «Հայաստանի համար զուցե ավելի լավ է անցնել որևէ մեծ տերության, օրինակ՝ Ռուսաստանի պաշտպանության տակ և այդպես պահպանել իր յուրահատկության և անկախության հսկայական չափը»<sup>33</sup>:

Ֆինանսական առումով տեղեկացվում էր, որ անտեսելով կոտորածն ու նրա հետ կապված երկրի կործանումը, հայկական նոր պետությանը պարտավորեցրին վճարել օտտոմանյան պարտքի 33,5 մլն. դոլարը: Տարեկան ևս 2,1 մլն. պահանջվում էր այն սպասարկելու համար<sup>34</sup>: Փաստաթղթում ՀՀ ընդհանուր դրությունը համարվում է ո՛չ փայլուն, ո՛չ էլ հուսահատ: Հետևաբար, ԱՄՆ-ն կարող էր բաց անել միջին չափերի վարկեր և տեխնիկական խորհրդականներ ուղարկել:

Գրությունը Պետդեպարտամենտ փոխանցելուց հետո՝ 1920թ. հոկ-

<sup>29</sup> US NA, RG 59, 760J.6715/65/f.94/մհ 35:

<sup>30</sup> Ibid., f.97:

<sup>31</sup> Ibid., f.101-102.

<sup>32</sup> Ibid., f.144: Մեկ ամիս ավելի շուտ համանման կարծիք է արտահայտել Վրաստանում աշխատող ՀՀ դիվանագետ կոմս Մ.Թումանյանը, հյուպատոս 2.Սոզերին 14.08.1920-ին գրած իր նամակում. 860J.00/4/Encl.1/f.8, T1192/Roll1/ մհ 49:

<sup>33</sup> P.Ованнисян, ук.соч., с.718-719, US NA, RG 59, 760J.6715/65/f.149/մհ 35:

<sup>34</sup> Ibid., f.151:

տենքերի 18-ին, Կոլբին ստացավ Սևրի դաշնագրի վավերացրած պատճենը: Հոկտեմբերի 28-ին Գ.Պաստրնաճյանը հանդիպեց պետքարտուղարի տեղակալ Ն.Դեվիսի հետ<sup>35</sup>, որին պատմում էր կայուն պայմանների և բնակչության ու զինվորների գերազանց բարձր ոգու մասին: Նա ասում էր, թե երևանում լիովին գիտակցում էին երկու ճակատներով կռվելու ամբողջ ծանրությունը, սակայն բոլշևիկների հետ համաձայնության չէին հասնում՝ խոչընդոտելով Կարմիր բանակի մուտքը և պահպանելով սեփական իրավունքները Սևրի հանդեպ: 1920թ. նոյեմբերի 5-ին Վաշինգտոնում ընթերցվեց Վիլսոնին հղած Հ.Օհանջանյանի հետևյալ ճեպագիրը. «Ուժասպառ լինելով այն պայքարից, որ նա մեծ-մեծակ է մղում մեր և ձեր ընդհանուր թշնամու դեմ, կորցնելով Կարսը և հայտնվելով Ալեքսանդրապոլի կորստի // -292 շենին, Հայաստանը ստիպված է ձեզ վերջին անգամ աղերսել՝ ...դիվանագիտական միջոցներով ստիպեք թշնամուն ընդհատել նրա ռազմական գործողությունները»: Շուտով Օհանջանյանը լրացրեց. «Այսօր՝ նոյեմբերի 7-ին, [իր երկիրը] ստիպված էր զինադադար կնքել»<sup>36</sup>: Օգնության ևս մեկ կոչ հնչեց ամսի 11-ին. «Կարսի գրավմանը հետևած թուրքական առաջխաղացումը Ալեքսանդրապոլի վրա առայժմ զսպվում է մեր բանակով հենց Ալեքսանդրապոլի մերձակայքում: ...Թշնամին ստիպված էր նահանջել, բայց այս գործողությունների պահին ըմբոստացան Ադրաբայի թուրքերը՝ թուրքական կանոնավոր ստորաբաժանումների ղեկավարությամբ նրանք հարձակվում են մեր զորքերի թիկունքից: Այսպիսով, Ալեքսանդրապոլի գրավումը թուրքաքան գորքերով դառնում է անխուսափելի: ...

Մեր գլխավոր հրամանատարությանն ուրիշ բան չի մնում, քան ընդունել... զինադադարի առաջարկը, որպեսզի հնարավոր լինի փրկել բնակչությանը վերահաս կործանումից: ...Պարտքս են համարում արտահայտել այստեղ... սարսափի այդ զգացումն, որով իմ կառավարությունը համաձայնվեց ձեռնարկել... այս քայլը»: Հայաստանի ողբերգական իրավիճակը սաստկանում է քանի որ «1) այս նոր աղետը մեզ վրա է հասել ...Հանրապետությանը... Սևրի դաշնագրում ...իրավական կերպով ճանաչումից հետո և 2) նրա կնքման հետևանքով Ռուսաստանից, Եվրոպայից և Կ.Պոլսից ժամանեցին բազմաթիվ գաղթականներ... որոնք շտապեցին վերադառնալ Հայրենիք, որտեղ նրանք նորից պիտի ենթարկվեն մահառիթ հարվածներին, ինչպես և 3) ...այս ջախջախումը ծավալվում է... Դաշնակիցների գիտությամբ, իսկ նրանք չեն կամեցել գործնական աջակցություն ցուցաբերել Հայաստանին»<sup>37</sup>:

Այս դիմումների ավելացնենց միայն, որ Հայաստանի նման Ադրբեջանն էլ էր գործում խորհրդա-թուրքական դաշինքի ներքո, սակայն այդ երկրի ղեկավարները ճիշտ պահերին փոխում էին իրենց // -293 վարքագիծը նույնաման պայմաններում հասնելով շատ մեծ ձեռքբերումների: Այնինչ, 1920թ. թուրք-հայկական պատերազմի աղետալի ընթացքը պա-

<sup>35</sup> US NA, RG 59, 860J.00/-f.2/մհ 49:

<sup>36</sup> Ibid., 760J.6715/47:Telegram/մհ 35, ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.249, ք.663-664:

<sup>37</sup> US NA, RG 59, 860J.00/17/Encl.3/մհ 49: Թիֆլիզում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ.Բեկզադյանի նամակը Անդրկովկասում ԱՄՆ-ի հյուպատոս Զ.Մոզերին:

յմանավորված էր զանգվածների հուսախաբությամբ. երկու ճակատներում կռվելու հեռանկարից, ինչն իր հերթին հանգեցրեց Սևրից ՅՅ պաշտոնական հրաժարմանը, և սա ձևակերպվեց Ալեքսանդրապոլում՝ որպես երևանյան պատվիրակության նոյեմբերի 26-ի հայտագիրը և ընթերցվեց երկկող բանակցությունների 2-րդ լիազումար նիստում: Կարծում ենք, չվավերացրած բայց կարևոր նշանակություն ունեցող Սևրի դաշնագրի համալիր վերլուծությունն օգնում է ավելի լավ հասկանալ այդ շրջանի քաղաքական պատմությունն ու ճիշտ կողմնորոշվել արդիական, երբեմն խճճված իրավիճակներում:

## The Sevres Peace Treaty and U.S. Policy in Regard to the Republic of Armenia in 1919-1920

### Summary

The Sevres Treaty revealed the U.S. unwillingness to put Armenians in ward, since it was insufficiently profitable. W.Wilson had substituted the large-scale relief for military and political cooperation with the Republic of Armenia; and Senators warned that the Treaty would urge the wide-front Turkish offensive. All the delays of the U.S. President were not for the benefit of Erivan, where politicians did not bring themselves to face-to-face talk with the Kemalists; were inferior in creation and operation of the armed forces, and lost the war of 1920. // -294

## Севрский договор и политика США в отношении Республики Армения в 1919-1920 гг.

### Резюме

Севрский договор выявил нежелание США принимать на себя недостаточно выгодную опеку над армянами. В.Вильсон заменял военно-политическое сотрудничество с Республикой Арменией оказанием ей широкомасштабной помощи, а сенаторы предупреждали, что договор вызовет большое турецкое наступление. Все проволочки президента США не принесли пользы Еревану, где не пошли на прямые переговоры с кемалистами, уступив им в военном строительстве и проиграв войну 1920 г.

© Գ.Գ.Մախմուրյան, 2018

8 էջ

«Հայաստանի Հանրապետություն-100» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ին-տ, 2018, էջ 284-294: